ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/14

ք. Սիսիան «19» օգոստոս 2019թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Ա. Սարգսյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷԼԵԿՏՐՈԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Աղաբեկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, սվալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի,

2.1.8 Ձննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո՝ անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4428000 (չորս միլիոն չորս հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամսիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝

մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն զատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները[23] :

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի լրանալ մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է վեց էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Սիսիանի համայնք	«ԷԼԵԿՏՐՈԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Սիսիան, Սիսական 31	ք. Երևան, Օտյան 52
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 900292101061	Հ/Հ 1570023387110100
ՀՎՀՀ 09215978	ՀՎՀՀ 01269841
Համայնքի ղեկավար_____Ա. Սարգսյան	Տնօրեն_____Հ. Աղաբեկյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«19» օգոստոս 2019թ. կնքված
ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	32341110/1	Բարձրախոս /ակտիվ/	ԱՄՆ, JBL PRX 825	Բարձրախոս JBL PRX 825 արտադրման տարեթիվը 2019թ. չօգտագործված: Ձայնային և երաժշտական ուժեղացման համակարգերի համար նախատեսված հզոր 2x15 դյույմ ակտիվ լարային համակարգ, որի բարձրախոսը պետք է հագեցված լինի երկու հատ 15 դյույմ Differential Drive® woofers և 1.5 դյույմ նեոդիումային սեղմման 2408H վարորդով, օղակաձև բացվածքով: Անվանական հզորությունը պետք է կազմի 1500 W C-Class "D" և ունենա բազմաֆունկցիոնալ թվային ուժեղացուցիչ:	հատ	499000	998000	2	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսական 31	2	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 60 (վաթսուն) օրացույցային օրվա ընթացքում

				Բարձրախոս պետք է պատրաստված լինի երկարակյաց և թեթեւ նրբաթիթեղից, ծղոտներից (25 մմ վերևից և ներքևից, 18 մմ կողմերից) և վերամշակված նյութերով DuraFlex կամ համարժեք: Մուտքի վահանակը. - երկու հավասարակշռված կոմպոզիցիաներ XLR-Jack 1/4 "և երկու հավասարակշռված RCA; - ազդանշանի LED ցուցիչ, սահմանափակող յուրաքանչյուր ալիքի համար - EQ switch (EQ: Normal / Boost ռեժիմներ); - զգայունության անջատիչը Mic / Line 1-ին ալիքի համար և Ground Lift 2-րդ ալիքի համար; - կոճակը LED ցուցիչը անջատելու համար Բնութագրերը Հաճախականության տիրույթ 42 Հց - 18.5 կՀց Հզորություն 1500W Ձայնային ճնշման առավելագույն մակարդակը 139 дБ ԲԿ վարորդ 2408H-1.5 " ՀԿ վարորդ 2 x 15 Differential Drive® Ծածկույթ 90 ° x 50 ° Տեղադրում / փոխադրում: 2 տրված բռնակներ Չափսեր (H x W x D) 1070 x 445 x 538 մմ Զուտ քաշը 37.2 կգ կամ ավելի: Գույնը `սև Երաշխիքային սպասարկումը՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:							
2	32341160/1	Բուֆեր /18 դյույմ, ակտիվ/	ԱՄՆ, JBL PRX818 XLF	Բուֆեր JBL PRX818XLF արտադրման տարեթիվը 2019թ. չօգտագործված: Համակարգի տեսակը – ակտիվ, Ներկառուցված ուժեղացուցիչ `D դաս, Գնահատված ելքային հզորություն (RMS) `1500 Վտ, Հաճախականության տիրույթ (10 դբ): 30 Հց - 103 Հց, Հաճախականության տիրույթ (+/3 դբ): 35 Հց - 87 Հց, Ձայնային ճնշումը `134 դբ – զազաթ, Բուֆեր- 18" JBL2278G 460 мм Differential Drive® DSP- ի կողմից վերահսկվող ֆիլտրը 90 Հց	հատ	720000	1440000	2	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսական 31	2	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 60 (վաթսուն) օրացույցային օրվա ընթացքում

				...ճախականությամբ, Սահմանափակող:- Այո Ազդանշանի վերամշակումը- ներկառուցված DSP, EQ: Այո, Նյութը- 18 մմ, սպիտակ փայլաթիթեղ, Ծածկույթ-DuraFlex ™ լաքապատ ծածկույթ, Պաշտպանիչ խցիկ ՝ սեւ, հատիկավոր ծածկույթով, 16 ժապավենով, փոխանցող փրփուր, Տեղադրում / փոխադրում: ռետինե ոտքեր / 2 տրված բռնակներ, Աքսեսուարներ: 35 մմ զուգակցված ապակու սկավառակի համար, Էլեկտրաէներգիայի մատակարարում ՝ 90-132 ՎԱ կամ 216-264 վտ, 50/60 Հց, Լարման: օգտագործողի կարգավորելի: 120V / 240V (-15%, + 10%), Միակցիչ ՝ IEC, Չափսեր (HxWxD) ՝ 690.4x523.2x723.9 մմ, Քաշը ՝ 36.8 կգ կամ ավելի, Գույնը ՝ սև: Երաշխիքային սպասարկումը՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:							
3	32341110/2	Ակտիվ բարձրախոսով աշխատող մոնիտոր	ԱՄՆ, EON615	Ակտիվ ակուստիկա JBL EON615 արտադրման տարեթիվը 2019թ. չօգտագործված: Ակտիվ երկկողմանի համերգների համակարգ, Կրկնակի շահագործման շրջան (bi-amp), D դասի բարձր արդյունավետության ուժեղացուցիչներ Բարձրախոս 15" և հատկանիշները նեռդինային սեղմման վարորդին 1" », պոլիմերային դիֆրագրամ, հատուկ ձեւավորված ալիք, Դիսֆունկցիան ՝ 90x60 աստիճան, Բարձր հզորություն ՝ 1000 Վտ, շարունակական - 500 Վտ, Ներկառուցված Bluetooth 4.0 մոդուլ, DSP- ի հեռակառավարում, Համակցված XLR / TRS մուտքագրումները, XLR-M, Տիպային երկկողմանի համերգի բարձրախոսը, Ակտիվ կատեգորիա, Ուժեղացուցիչ- D դասի,	հատ	390000	1560000	4	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսական 31	4	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 60 (վաթսուն) օրացույցային օրվա ընթացքում

				Բարձրախոս -15 " (380 մմ), Բարձրախոս - 1 "(25.4 մմ), Հաճախականության տիրույթ 50 Հց - 20 կՀց (+/- 3 դբ), 39 Հց - 20 կՀց (-10 դԲ), Դիսպերսիա - 90x60 աստիճան, 1.8 կՀց խաչաձեւ հաճախականությունը, Շարունակական հզորություն 500 (350 + 150) W, Առավելագույն հզորություն 1000 (700 + 300) W, Առավելագույն ձայնային ճնշման մակարդակը 127 дБ, Ներածման թույլտվություն 20 կՎտ (հավասարակշռված կապ), Առավելագույն մուտքային մակարդակը +14 dB (գիծ), -4 dB (միկ), Ներածում 2 x XLR / TRS, Արդյունքներ 1 x XLR-M, Էներգիայի սպառումը 1.14A @ 1/8 առավելագույն հզորություն, Գույնը սև , Նյութ պոլիպրոպիլեն, Չափերը 707 x 439 x 365 մմ, Քաշ 22 կգ կամ ավելի: Երաշխիքային սպասարկումը՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:							
4	32341240/1	Ուժեղացուցիչ /պասիվ/	Ճապոնիա, MG16XU	Ուժեղացուցիչ /պասիվ/ Yamaha MG16XU արտադրման տարեթիվը 2019թ. չօգտագործված: 16-ալիքի, առավելագույնը 10 խոսափող / 16 գիծ մուտքագրումներ (8 մոնո + 4 ստերեո) / 4 խմբային + 1 ստերեո / 4 AUX (ներառյալ FX): Միակողմանի կոմպրեսորներ Բարձր որակի ազդեցություն. SPX- ը 24 ծրագրերով, USB Audio ինտերֆեյս, 2 մուտք / 2 ելք 24 բիթ / 192 կց, IPad- ի օժանդակություն (2-րդ կամ ավելի), Apple iPad Camera Adapter- ի հետ: Պետք է ներառի Cubase AI ձայնագրման ծրագրային ապահովում, ներբեռնման տարբերակ Հավատարմագրիչ (PAD) մոնո մուտքագրման վրա	հատ	430000	430000	1	ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսական 31	1	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 60 (վաթսուն) օրացույցային օրվա ընթացքում

				48 Վ Phantom Power, XLR- ի հավասարակշռված արդյունքներ: Ներկառուցված համընդհանուր հոսանքի մատակարարում՝ աշխարհի բոլոր շրջաններում Rack Mount Kit ընդգրկված: Մետաղական կոնստրուկցիա, Չափսեր (W × H × D): 444 մմ x 130 մմ x 500 մմ, Քաշը առանց փաթեթավորման՝ 6.8 կգ կամ ավել: Երաշխիքային սպասարկումը՝ ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր:							

ԳՆՈՐԴ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101061
ՀՎՀՀ 09215978

/ Համայնքի ղեկավար_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷԼԵԿՏՐՈԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Օտյան 52
«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570023387110100
ՀՎՀՀ 01269841

Տնօրեն_____ Հ. Աղաբեկյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«19» օգոստոս 2019թ. կնքված
ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-19/14 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32341110/1	Բարձրախոս /ակտիվ/	-	-	-	-	-	-	-	998000	998000	998000	998000	998000	998000
2	32341160/1	Բուֆեր /18 դյույմ, ակտիվ/	-	-	-	-	-	-	-	1440000	1440000	1440000	1440000	1440000	1440000
3	32341110/2	Ակտիվ բարձրախոսով աշխատող մոնիտոր	-	-	-	-	-	-	-	1560000	1560000	1560000	1560000	1560000	1560000

4	32341240/1	Ուժեղացուցիչ /պասիվ/	-	-	-	-	-	-	-	430000	430000	430000	430000	430000	430000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292101061
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավար_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԷԼԵԿՏՐՈԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Օտյան 52
«Ամերիաբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570023387110100
ՀՎՀՀ 01269841

Տնօրեն_____ Հ. Աղաբեկյան
(ստորագրություն)
Կ.Տ